

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Քաղաք Երևան

տասնինը հոկտեմբերի, երկու հազար տասնհինգ թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում հոկտեմբեր 19-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հանրային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ՀՀ արդարադատության նախարար

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

ՎԻԳԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

ԹԵՎԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

ԱՐՄԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ - «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԱՐՄԵՆ ԵՍՈՅԱՆ - «Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ - «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

ՀԱՍԱՆ ԹԱՄՈՅԱՆ - Եզդիների ազգային միություն

ԱՎԵՏԻՔ ԻՇԽԱՆՅԱՆ - «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

ՎԻԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ - «Իրավունքի հայկական կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԱՐՄԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ - «Ժողովրդավարության և իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպություն

ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն

ԱՐՄԵՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ - «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ» հիմնադրամ

ՓԻՐՈՒԶԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ - «Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ» հիմնադրամ

ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպություն

ԴԱՎԻԹ ԱՄԻՐՅԱՆ - «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամի հայկական մասնաճյուղ» Հիմնադրամ

ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑ - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի
գրասենյակ» հասարակական կազմակերպություն

ՌԻՄԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ - «Հայաստանի հրեական համայնք» հասարակական
կազմակերպություն

ՀԵՐԻՔՆԱՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Երևանի մամուլի ակումբ

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ - Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի
լրատվական-հեռագրական գործակալության (ԻՏԱՌ-ՏԱՍՍ) ներկայացուցչության
ղեկավար

ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ - «Աքիլես» ավտովարորդների իրավունքների
պաշտպանության կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԼՈՒՍԻՆԵ ԹԱՍԱԼՅԱՆ - «Գիտակցի իրավունք» հասարակական
կազմակերպություն

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ - «Հայ-ամերիկյան բարեկամություն» հասարակական
կազմակերպություն

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - «Հայ-ամերիկյան բարեկամություն» հասարակական
կազմակերպություն

ԱՄՈ ՇԱՐՈՅԱՆ - «Միդիա Շանգալ» Եզդիների ազգային միավորում
հասարակական կազմակերպություն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք
2. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ
3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի
Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի
նախագիծ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը ողջունեց հանրային խորհրդի անդամներին և նշեց, որ պատրաստակամ է բաց և թափանցիկ կառավարմանն ուղղված համագործակցությանը նոր բովանդակություն հաղորդել՝ հաշվի առնելով նմանօրինակ ձևաչափերով ունեցած հաջող փորձը: Արփինե Հովհաննիսյանը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության պատրաստակամություն հայտնեց և ընդգծեց, որ նրանց ունեցած դերով է պայմանավորված նաև տարբեր ծրագրերի հաջող ընթացքը:

Անդրադառնալով նիստի օրակարգում ընդգրկված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծին՝ նախարարը նշեց, որ լրամշակումներից հետո առաջիկա օրերին այն արդեն կուղարկվի ՀՀ կառավարություն:

Արփինե Հովհաննիսյանն առանձնացրեց լրամշակման արդյունքում օրենքից դուրս հանված ներքին հաշվետվողականության սկզբունքին առնչվող այն դրույթը, որը վերաբերում էր հանրային միջոցներից չֆինանսավորվող ՀԿ-ների կողմից իրենց անդամներին նաև հաշվետու լինելուն՝ հիմնավորելով այն հանգամանքով, որ խնդիրը լիովին լուծելի է ՀԿ-ների ժողովում ներկայացվող հաշվետվությունների շրջանակներում: Այնուհետև նախարարը խոսքը փոխանցեց իր առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանին՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի լրամշակված նախագիծն առավել մանրամասն ներկայացնելու համար:

ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑ

Նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը, ներկայացնելով ՀԿ-ների մասին ՀՀ օրենքի նախագիծը, հանրային խորհրդի անդամներին ուղղված հարցադրում արեց՝ ակնկալելով լսել նրանց դիրքորոշումը՝ ո՞րն է ֆինանսավորման ողջամիտ այն շեմը, որի դեպքում արդարացված կլինի հանրային ֆինանսավորվող ընկերության առաջ աուդիտի ներկայացման պահանջ դնելը: Լրամշակված նախագծով այդ շեմը սահմանված է 10 000 000 ՀՀ դրամը, որը նախապես 3 000 000 ՀՀ դրամ էր:

<<Մարդկային զարգացման միջազգային կենտրոն>> ՀԿ-ի նախագահ Արմեն Գալստյանի խոսքով՝ աուդիտի անցկացման համար 10 000 000-ի շեմին անդրադարձներ ժամանակին եղել են միջազգային կազմակերպությունների

մասնակցությամբ և իր տեսակետը հետևյալն է՝ թող որևէ միջազգային կազմակերպության ներկայացուցիչ ասի, որ 25 000 դոլար գրանտի/դրամաշնորհի դեպքում հնարավորություն կտան ՀԿ-ին վարչական ծախսեր նախատեսել և այդ վարչական ծախսերի մեջ դնել նաև 3 000 000-ից սկսող աուդիտ:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի նախագահ Հայկուհի Հարությունյանը հայտնեց հետևյալ դիրքորոշումը, որ սովորաբար գրանտային ծրագրերի համար հենց դոնորները սահմանում են, որ տրամադրվող գումարի 10 տոկոսը պետք է տրամադրվի զուտ ծրագրային աուդիտի համար, ոչ թե ամբողջ կազմակերպության:

ՀՀ ԱԺ պատգամավոր Թևան Պողոսյանի առաջարկով կարելի է խնդիրը դնել այնպես, որ հաշվետվությունները հրապարակվեն պետականների կամ հանրայինների մասով, իսկ դրսից ֆինանսավորման խնդրի համար կարելի է ավելի մեծ գումար սահմանել, որ հասկանալի լինի՝ կազմակերպություններն ավելի մեծ գումար ստանալու դեպքում նոր միայն պետք է աուդիտ անցնեն, քանի որ ՀԿ-ները եթե ցանկանում են դիմել որևէ եվրոպական ծրագրի, իրենք իրենցով գտնում են գումարը և դիմում են աուդիտ անցնելու, որ ավելի մրցակցային լինեն:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Արթուր Սաքունցի դիտարկմամբ, եթե հիմնադրամը պահանջում է և եթե ծրագրի մեջ իրապես նախատեսվում է այն որոշակի գումարը, որն անհրաժեշտ է աուդիտի համար, ապա իրենք, բնականաբար, աուդիտ անցկացնում են: Բայց եթե հիմնադրամը գումար չի նախատեսում աուդիտի համար և բյուջեով չի հաստատվում աուդիտի համար տող, ապա կազմակերպությունն իր միջոցների հաշվին չի կարող դա անել, կամ եթե նույնիսկ կազմակերպությունը ցանկանա, բայց դոնորը չցանկանա աուդիտ, ապա կազմակերպությունը չի էլ կարող աուդիտ անցկացնել: Հետևաբար, աուդիտի անցկացումը կապված է շատ կոնկրետ դեպքից:

<<Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա>> ՀԿ-ից Սյուզաննա Սողոմոնյանի կարծիքով՝ գուցե դիտարկվի նաև այն հնարավորությունը, որ այն ծրագրերը, որոնք իրականացվում են հանրային միջոցների հաշվին, ապա դրա աուդիտը ևս իրականացվի հանրային միջոցների հաշվին:

«Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ» ՀԿ-ի ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի դիտարկմամբ

10 000 000 ՀՀ դրամի շեմը քննարկումների արդյունքում ծնվեց, քանի որ սկզբում շատ ավելի քիչ էր և գաղափարը նա էր, որ սկզբնապես նախանշված 3 000 000 դրամի շեմը շատ քիչ էր, հիմա եթե տենդենցը գնում է նրան, որ դրամաշնորհներն ավելի մեծ են լինելու, այդ դեպքում պիտի այս գումարի շեմն ավելի մեծանա և վերաբերի բացառապես նրանց, ովքեր այդ գումարները հանրային միջոցներից են ստանում: Եվ կհստակ էր գործընկերների այն տեսակետը, որ որևիցե դոնոր 25 000-ի մեջ 5000-ը հաստատ չի համաձայնվելու տրամադրել աուդիտին, ուստի կարելի է մտածել 10 000 000-ի շեմն ավելի մեծացնելու մասին:

<<Իրավունքի գերակայություն>> իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Արտակ Ջեյնալյանի կարծիքով 10 000 000-ը քննարկումների արդյունքում ձևավորված թիվ է, և դա ամենաօպտիմալ շեմն է աուդիտի պահանջ ներկայացնելու համար:

Խորհրդի անդամների տեսակետներն ամփոփելու նպատակով նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը ընդհանրական հարցով փորձեց հստակեցնել՝ ճիշտ է արդյոք այն ընկալումը, որ քննարկման բոլոր մասնակիցների մոտ այն կարծիքն է, որ աուդիտը պետք է վերաբերի կոնկրետ դրամաշնորհի շրջանակում իրականացվող ծրագրին, ինչին ի պատասխան խորհրդի անդամները միասնաբար դրական արձագանքեցին:

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Արթուր Սաքունցի խոսքով՝ 2010 թվականին նախագահի աշխատակազմի կողմից տրված ֆինանսական չափերը ՀԿ-ներին տատառվել են 4.5-ից մինչև 16 միլիոնի չափով: Դրամաշնորհների տենդենցը կարելի է ասել, որ կայուն է: Նրա համոզմամբ, պետությունը, եթե շահագրգռված է օրենքով նպաստելու հասարակական կազմակերպությունների շահագործմանը, դրա համար պետք է վճարի: Մենք գիտենք, որ պետական բյուջեյի միջոցները սուղ են, դրա համար մենք պետք է գո՞հ լինենք, որ ինչ որ ձևով նույնիսկ դրամաշնորհներ են մեզ տրվում զարգացման համար, բայց զարգացման այն ձևը, որը մինչ օրս եղել է, չի բավարարում և մենք իրապես պահանջում ենք աուդիտի անցկացում:

Արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, արձագանքելով հնչած տեսակետներին, նշեց, որ դրանք հասկանալի են և երբ ՀԿ-ների զարգացման համար ընթացակարգերը և ՀԿ-ների զարգացման տեսլականները պարզ դառնան, հետագայում շատ բաներ քայլ առ քայլ կփոփոխվեն: Արթուր Սաքունցի ասածին էլ

անդրադառնալով՝ նախարարը նշեց, որ ոչ թե ցանկանում է ամբողջովին բացառել կամ ամբողջովին հերքել, այլ սկզբունքորեն կարծում է, որ այն հնարավոր կլինի ինչ-որ փուլում իրականացնել, իսկ այս պահին պետք է քննարկել առարկայական: Արսեն Մկրտչյանը նշեց, որ բարձրացված հարցին դրական է նայում. իրականում, եթե ցածր է շեմը, դա հետագայում բերելու է նրան, որ ֆինանսավորվող ծրագրերը ավելի թանկանալու են, եթե վարչական ծախսերը բարձրանալու են, ծրագրերը թանկացվելու են: Պետությունը փաստացի վճարելու է իր ծրագրերի համար, այնպես որ մենք շահագրգռված չենք, որ Ձեր վարչական ծախսերը բարձրանան, ճիշտ հակառակը:

Նիստի ընթացքում, օրակարգային առաջին հարցի շրջանակում մասնակիցներն անդրադարձան նաև ՀԿ-ների կողմից դատարան դիմելու իրավունքին:

«Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ» ՀԿ-ի ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի խոսքով՝ դատարան դիմելու իրավունքը նախագծի երկրորդ կարևոր մասն է: Նրա դիտարկմամբ, կարելի է օրինակ վերցնել Թեղուտի գործը, որը ներկայացվել էր որպես հանրային շահ: Պրակտիկան ցույց է տալիս, որ այսօր շատ դժվար է գնալ և այդ հանրային շահով դիմել դատարան: Դատական համակարգը, պետական համակարգը մշակույթ է ձևավորում, որ այդ կազմակերպությունը, օրինակ, ընտանեկան բռնության հայցով մտնի դատարան, որովհետև դա հանրային շահ է:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑ

Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի նիստի մասնակիցներին ներկայացրեց «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նշելով, որ առաջարկվում է փոփոխություններ կատարել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ սահմանելով վարչական պատասխանատվություն հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրում սխալ (այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ) տվյալներ ներկայացնելու, կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ ամբողջապես

չներկայացնելու համար: Մասնավորապես՝ գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրերը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը առաջացնում է

- նախազգուշացում:

- Նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում, հայտարարագիրը չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ երկուհարյուրապատիկի չափով:

- Տուգանքի նշանակումից հետո՝ 30 օրվա ընթացքում հայտարարագիրը չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ հինգհարյուրապատիկի չափով:

- Հաշվետու տարվան հաջորդող 1 օրացուցային տարվա ընթացքում հայտարարագիրը չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

- Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրերը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ (այդ թվում՝ վրիպակներ և տեխնիկական սխալներ թույլ տալը) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

- Նախազգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում հայտարարագիրը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան

չլրացնելը և կարգին համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

- Տուգանքի նշանակումից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան չլրացնելը և կարգին համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ հինգհարյուրապատիկի չափով:

- Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում սխալ կամ կեղծ տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

- Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ ամբողջապես չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով»:

Նախարարի տեղակալի խոսքով՝ նախագծի ընդունման արդյունքում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող հայտարարագրման հետ կապված պարտականությունների չկատարման դեպքում համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի փոխկապակցված անձը կենթարկվի վարչական պատասխանատվության:

ՀԿ ներկայացուցիչների այն դիտարկմանը, թե արդյո՞ք շատ մեղմ պատասխանատվություն չի սահմանվում պաշտոնատար անձանց նկատմամբ, մասնավորապես նախագգուշացումը, Սուրեն Քրմոյանը պատասխանեց, որ քննարկվել է հետագայում սրա կիրառման արդյունքներն ամփոփելուց քրեական պատասխանատվության ենթարկել այն անձանց, որոնք չեն վախենա ո՛չ քաղաքականից, ոչ վարչականից:

ՈՐՈՇՎԵՑ

Քննարկված թեմաների վերաբերյալ առաջարկ ունենալու դեպքում այն գրավոր ներկայացնել Հանրային խորհրդի քարտուղարությանը՝ council@justice.am էլեկտրոնային հասցեով, նաև ցանկության դեպքում նախանշել հաջորդ նիստերին քննարկվող թեմաները:

Արձանագրությունը բաղկացած է 9 էջից: